



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 36ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՆ

ԲԱՐՁՐ. Տ. ՄՈՒՇԵՂ Ս. ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ
ՔԱՌԱՄԵԱԿԻ ՍԸ ՀԱՄԱՐ ԸՆՏՐՈՒԵՑԱՒ ԹԵՄԱԿԱԼ
ԱՌԱՋՆՈՐԴ

- ԸՆՏՐՈՒԵՑԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՆՈՐ ԿԱԶՄԵՐԸ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովի 36րդ նստաշրջանը տեղի ունեցաւ Ուրբաթ, 9 եւ Շաբաթ, 10 Մայիսին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Արմենակ Տեր Պետրոսեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի: Ժողովը քննարկեց Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան միամեայ գործունեութիւնը, մշակեց յառաջիկայ տարուան աշխատանքի նախագիծը, ինչպէս նաեւ կատարեց Թեմակալ Առաջնորդի, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան նոր կազմերու ընտրութիւնը:

Նիստին բացումը տեղի ունեցաւ Ուրբաթ յետմիջօրէին, աղօթքով եւ հոգեւորականաց դասուն կողմէ շարականի երգեցողութեամբ: Երեսփոխաններու մեծամասնութիւնը ներկայ էր նիստին: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան անդամները, հոգաբարձութեանց ատենապետները, Ազգային վարժարաններու տնօրէններ եւ վարիչներ:

Առաջնորդ Սրբազանը, ժողովին բացումը կատարելով, ողջունեց ներկաները եւ հրաւիրեց Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանը, որպէսզի ընթերցէ ժողովին ուղղուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին պատգամը: Վեհափառ Հայրապետը կ'ողջունէր ժողովականները եւ վեր կ'առնէր այն իրականութիւնը, որ մեր եկեղեցին ժողովուրդին համար է ու կոչուած է ծառայելու մեր ժողովուրդին, հետեւաբար, ազգային կեանքին նուիրեալները պէտք է այս մօտեցումով ու կամքով լծուին ծառայութեան, ուշադրութիւն կեդրոնացնեն եկեղեցի-ժողովուրդ կապերուն ամրապնդման ու մանաւանդ երիտասարդները հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու առաջնորդելու գործին: Ան կը մաղթէր, որ այս ժողովն ու

եկեղեցական մարմինները կարենան ծառայական աշխատանքը սերտ գործակցությամբ դարձնել անելի ազդու:

Առժամայ դիւանի ատենապետ ու ատենադպիր ընտրուեցան, յաջորդաբար՝ Տեարք Յայկազ Թրթռեան եւ Յայր Թիւֆէնքճեան:

Ողջոյնի խօսքեր արտասանեցին Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչն ու Թեմիս Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան: Տիար Խ. Տիքիճեան ողջունեց ներկաները, գնահատանքի խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, շրջանաւարտ Կոստական Ժողովին ու Ազգային Վարչութեան, Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներուն՝ Յայր Միւռոնին ու Յայր Պարթեւին, ապա կանգ առաւ այս ժողովի աշխատանքներուն ու դիմագրաւած մարտահրաւերներուն վրայ: Ան նկատել տուաւ, որ անհրաժեշտ է չբաւականանալ կատարուած գործերով, այլ նոր իրագործումներով յառաջ տանիլ մեր կեանքը: Ան նաեւ անհրաժեշտ նկատեց, որ ազգի ծառայութեան լծուողներուն պարտքն է երթալ դէպի ժողովուրդ ու ընդառաջել անոր կարիքներուն: Տիար Տիքիճեան շեշտեց, որ մեր եկեղեցիներն ու վարժարանները կը կարօտին բոլորիս գործակցութեան, մանաւանդ, որ աշակերտութիւնն ու երիտասարդութիւնը ունին բազմաթիւ կարիքներ, իսկ մեր ժողովականութիւնը ունի անոնց ընդառաջելու կարողականութիւնը: Վերջապէս, ան յաջողութիւն մաղթեց ժողովին:

Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին, ժողովականութեան ու անձնակազմին՝ վերջին երկու տարիներու գործակցութեան համար, ապա նկատել տուաւ, որ այս ժողովը կոչուած է քննարկելու տարուած աշխատանքներն ու ծրագրելու յառաջիկայ փուլը: Տոքթ. Կարօ Յակոբեան նկատեց, որ մեր Թեմի ապրած աճը կը հարկադրէ ուժերը լարել ու քայլ պահել անոր հետ: Իր խօսքի ավարտին, ան յաջողութիւն մաղթեց ժողովի աշխատանքներուն:

Հիւրընկալ եկեղեցւոյ հոգաբարձութեան անունով ողջոյնի խօսք արտասանեց Տիար Չարեհ Մարգարեան, որ ողջունեց ներկաները, շնորհակալութեան խօսք ուղղեց Առաջնորդ Սրբազանին եւ Ազգ. Վարչութեան, որոնք կը հովանաւորեն Թեմիս աշխատանքները:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ՊԱՏՎԱՄԸ

Առաջնորդ Սրբազանը, ողջունելով ներկաները, փառք տուաւ Աստուծոյ՝ աշխատանքի յաջող տարուան համար, ապա նաեւ երախտագիտութեան ու շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Յայրապետին՝ Թեմիս նկատմամբ Նորին Սուրբ Օծութեան հոգածու ու հայրական վերաբերմունքին համար, յիշեցնելով, որ Վեհափառ Յայրապետը 2008 տարին հռչակած է Զրիստոնէական Դաստիարակութեան տարի, ու մեր Թեմը եւս յատուկ հանդիսութիւններով ու ձեռնարկներով պիտի ընդառաջէ հայրապետական կոչին:

Առաջնորդ Սրբազանը նաեւ յայտնեց, թէ 2008 տարին յոբելէական տարի է Հիւսիսային Ամերիկայի մեր Թեմերուն համար, որովհետեւ պիտի տօնենք Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին կողմէ այս փերուն հոգեւոր

մատակարարութեան եւ ծառայութեան 50րդ տարեդարձը, որ կը զուգահիշի մեր Թեմի 35ամեակին:

Խօսելով Ազգ. Երեսփոխանական Ժողովին ու ընդհանրապէս Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող ժողովրդանուէր ու սերդնակերտ աշխատանքներուն մասին, Առաջնորդ Սրբազանը նկատել տուաւ, որ այդ բոլորը կը կատարուին «Ժողովուրդին հետ, ժողովուրդին համար» բնաբանով, հետեւաբար, թէ՛ այս ժողովին եւ թէ տարուան ընթացքին մեր տարած բոլոր աշխատանքներուն ընթացքին, պէտք է գործել այս մօտեցումով, նուիրումով, աշխատանքի որակն ու տարածքը բարելաւելու, ընդարձակելու կամքով: Ան կարելոր նկատեց ինքնաճանաչումը, կարողութեանց օգտագործումը եւ մանաւանդ ինքնասրբագրումի ճամբով հասարակական կեանքի յառաջ մղումը: Ան այս առիթով սեղմ պատկերը ներկայացուց անցնող տարուան ընթացքին տեղի ունեցած իրագործումներուն, նշելով, որ Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը, ինչպէս նախատեսուած էր, արդէն վերածուած է բեղուն աշխատանքի օճախի, կեդրոնն է հոգեւոր, մշակութային, ծառայական ու կրթական գործունեութիւններու: Առաջնորդ Սրբազանը եզրափակեց շէնքերը, որ ժողովուրդին ու նոր սերունդներուն ծառայութիւնը պիտի մնայ մեր ժողովականութեան ու նուիրեալներուն աշխատանքի գլխաւոր հիմնաքարը, եւ համոզում յայտնեց, որ մեր Թեմին նուիրեալները ունին այդ կարողականութիւնը, պիտի ծառայեն՝ նոյն եկեղեցւոյ ու միեւնոյն ազգի զաւակները ըլլալու գիտակցութեամբ ու յանձնառութեամբ, բարի գործ ընելու կամքով:

Ժողովը կատարեց մնայուն դիւանի ընտրութիւնը: Միաձայնութեամբ ատենապետ ընտրուեցան Տեարք Նազարէթ Ծատուրեան եւ Յայկազ Թրթրեան, իսկ ատենադպիր՝ Տեար Համօ Գասպարեան եւ Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Ժողովը ընտրեց բանաձեւի ու քուէախոյզ յանձնախումբեր. բանաձեւի յանձնախումբի անդամ ընտրուեցան Տեարք Ռուբիկ Կիրճեան, Կարօ Էշկիեան, Տոքթ. Մարգարէտ Մարկոսեան, Հրայր Թիւֆէնքճեան եւ Ժոռա Մանուչարեան, իսկ քուէախոյզ յանձնախումբի անդամ ընտրուեցան Տեարք Տաճատ Երեցեան, Տոքթ. Յակոբ Տիգրանեան եւ Գրիգոր Փիլոյեան:

Ապա, ծիսական շրջաններու հոգաբարձութեանց ատենապետները տուին հակիրճ զեկուցումներ՝ իրենց տարեկան աշխատանքին, իրագործումներուն եւ ծրագիրներուն մասին: Չեկուցումները կ'ընդգրկէին շինարարական, տօնակատարութեանց առիթով ձեռնարկներուն, յարաբերական, Կիրակնօրեայ վարժարաններու, Տիկնանց Միութիւններու, դպրաց դասերու եւ երիտասարդական խմբակներու կալուածները:

ՏԻԱՐ ՅՈՎՍԷՓ ՊՈՅԱՃԵԱՆ ԳԼԱՅԱՏԱՆՔԻ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ

Օրակարգի յաջորդ կէտերուն անցնելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը յայտարարեց, որ վերջին տարիներուն, Ազգ. Երեսփոխանական Ժողովին առիթով ստեղծուած է բարի ասանդութիւն մը, որն է պատուել Թեմիս կամաւոր նուիրեալ ծառայութիւն մատուցող ազգային մը:

Այս տարի, Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարչությունը գնահատանքի արժանի նկատած էին Փասատիևայի մեր ծխական համայնքի անդամներէն Տիար Յովսէփ Պոյաճեանը, որ միշտ պատրաստակամ եղած է նիւթապէս ու բարոյապէս սատար կանգնելու մեր աշխատանքներուն: Ան մեծ ծառայութիւն մատուցած է թէ՛ Ազգային Առաջնորդարանի Շէնքի յանձնախումբին անդամակցութեան ճամբով եւ թէ՛ Ս. Սարգիս, Ս. Խաչ եւ այլ եկեղեցիներուն: Առաջնորդ Սրբազանը, Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան ատենապետներուն հետ միասին, յուշանուէր մը յանձնեց Տիար Յ. Պոյաճեանի:

Տիար Պոյաճեան շնորհակալութիւն յայտնեց այս անակնկալին համար, եւ գոհունակութիւն յայտնեց, որ յատկապէս վերջին տարիներուն առիթը ունեցած է ծառայելու մեր Թեմին:

«ՅՈՅԺ ԳՆԱՅԱՏԵԼԻ»

Ժողովը ըստ եւութեան հանգամանօրէն քննարկեց Առաջնորդ Սրբազանին, Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, ներառեալ՝ Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինին միամեայ գործունեութիւնը, իր բոլոր երեսներով: Ժողովականներու լուսաբանական հարցումներուն տրուեցան սպառնիչ պատասխաններ: Այս բոլորին լոյսին տակ, ժողովը միամեայ աշխատանքներու ընդհանուր պատկերը գտաւ «յոյժ գնահատելի»:

ՆՈՐ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Օրակարգի յաջորդ կէտերուն անցնելէ առաջ, Առաջնորդ Սրբազանը ասեց, որ Թեմիս մէջ նոր երկրորդական վարժարանի մը համար, լոնտոնաբնակ ազգային բարերար Րաֆֆի Մանուկեան 6 միլիոն տոլարի նուիրատուութեան յանձնառութիւն կը ստանձնէ: Ժողովը ծափողջոյնով ընդունեց այս տեղեկութիւնը: Ծրագիրին համար, նկատի առնուած է հիմնականին մէջ Կլէնտէյլի շրջանը: Առաջնորդ Սրբազանը դրուատիքով արտայայտուեցաւ Տիար Խաժակ Տիքիճեանի մասին, որ գլխաւոր մղիչ ուժն է այս ծրագիրին հետապնդման:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱՒ Դ. ԶԱՌԱՄԵԱԿԻ ԶԱՄԱՐ

Առաջին օրուան օրակարգի վերջին կէտն էր թեմակալ Առաջնորդի ընտրութիւնը: Ժողովս ունկնդրեց այս մասին Վեհափառ Հայրապետին նամակը, որ կը ներկայացնէր թեկնածուներու եռանուն ցանկը, հետեւեալ հոգեւորականներէն բաղկացած.- Բարձր. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան, Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Հոգ. Տ. Փառէն Վրդ. Վարդանեան:

Զուեարկութենէն առաջ, Առաջնորդ Սրբազանը ազատ ձգեց ժողովականները:

Ժողովը քուէներու բացարձակ մեծամասնութեամբ եւ չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ վերընտրեց Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանը:

Հոգեւորականաց դասը թափօրով ու շարականի երգեցողութեամբ սրահ առաջնորդեց Առաջնորդ Սրբազանը: Դիւանի Ատենապետը շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը, յայտելով, որ ժողովս չորրորդ անգամ ըլլալով, յաջորդ 4 տարիներուն համար Առաջնորդ ընտրած է զինք:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան խօսք ուղղեց ժողովին, վերահաստատեց աշխատանքը յարատեւ ու վերանորոգ կամքով շարունակելու յանձնառութիւնը: Ապա, Առաջնորդ Սրբազանն ու Հոգեւորականաց Դասը, »Ուրախ Լեր« շարականին երգեցողութեամբ, թափօրով եկեղեցի ուղղուեցան ժողովականներուն հետ, ուր տեղի ունեցաւ յաւուր պատշաճի աղօթք:

Առաջնորդ Սրբազանը արտասանեց իր յետ-ընտրութեան առաջին պատգամը: Ան փառք տուաւ Աստուծոյ, շնորհակալութեան ու երախտագիտութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին եւ անգամ մը եւս շնորհակալութեան խօսք ուղղեց ժողովականներուն, իրեն վստահուած ծառայական առաքելութեան համար, ընդգծելով, որ այս ընտրութիւնը կը նկատէ ազնիւ մարտահրաւեր մը, որպէսզի յաւելեալ թափով ու վերանորոգ ճիգերով շարունակէ մեր եկեղեցւոյ ու թեմիս իր ծառայութիւնները: Ան կոչ ուղղեց բաց սրտով, անկեղծութեամբ, գործակցութեան ոգիով եւ անվերապահ աջակցութեամբ շարունակել աշխատանքները: Ան շեշտեց, որ արդիւնաւոր գործի համար, կենսական են ժողովականութեան ու ծխական շրջաններու միջեւ սերտ ու անկեղծ գործակցութիւնը, դրապաշտ մօտեցումն ու մեր դիմաց կանգնող բազում մարտահրաւերները արդիական աշխարհի հարկադրած միջոցներով դիմակալելը:

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ժողովը իր աշխատանքները շարունակեց Շաբաթ, 10 Մայիսի առաւօտուն:

Օրակարգի վրայ էին Կրթական Համակարգի Կանոնագիրին բարեփոխումն ու Թեմիս պատշաճեցուած Կանոնագիրին քննարկումն ու վաւերացումը:

Լսելէ ետք այս մասին Ազգ. Վարչութեան Տիար Ատենապետին կողմէ տրուած լուսաբանութիւնները՝ կատարուած աշխատանքին ու փոփոխութիւններուն մասին, ժողովը երկու կանոնագիրներուն վերամշակուած տարագները որդեգրեց իբրեւ մէկ ամբողջութիւն:

Այնուհետեւ, ժողովը արձանագրեց յառաջիկայ աշխատանքի տարուան համար առաջարկները եւ մշակեց ընդհանուր ծրագիր, անոնց գործադրութիւնը վստահելով Թեմիս Խառն Ժողովին, Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան եւ Խնամակալ Մարմինին:

Օրակարգի վերջին կետերն էին Կրօնական Ժողովի ու Ազգ. Վարչութեան նոր կազմերու ընտրութիւնը:

Կրօնական Ժողովի անդամ ընտրուեցան Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան, Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Արժ. Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան, Արժ. Տ. Նարեկ Զինյ. Փեղիվանեան, Արժ. Տ. Ռազմիկ Զինյ.

Խաչատուրեան, Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեան եւ Արժ. Տ. Վահան Քհնյ. Կոստանեան:

Ազգային Վարչութեան անդամ ընտրուեցան հետեւեալ ազգայինները. Տեարք Տոքթ. Կարօ Յակոբեան, Կարօ Աւագեան, Ներսէս Մելքոնեան, Վարուժան Տէր Սիմոնեան, Միեր Տէր Յովհաննէսեան, Տոքթ. Նաւասարդ Գազազեան, Վահէ Յովակիմեան, իրաւաբան Լեւոն Կիրակոսեան, Խաչիկ Երեցեան, Վահրիճ Փիլաւճեան, եւ Կարօ Էշկիեան:

Ժողովին ատենապետը՝ Տիար Նազարէթ Ծատուրեան, դիւանին անունով շնորհակալութիւն յայտնեց ժողովականներուն, իրենց ներդրումին համար: Ապա, ան իրաւիւրեց Առաջնորդ Սրբազանը կատարելու փակման եւ օրհնութեան խօսքը:

Առաջնորդ Սրբազանը գնահատանք եւ շնորհակալութիւն արտայայտեց դիւանին ու երեսփոխանական ժողովին, երկօրեայ աշխատանքին համար: Ան շնորհակալութեան խօսք ուղղեց Վեհափառ Հայրապետին, ապա նաեւ կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց իրեն հանդէպ վստահութեան համար, ինչ որ արտայայտուեցաւ չորրորդ քառամեակի մը համար Առաջնորդ իր վերընտրութեամբ:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքի ու շնորհակալութեան խօսք ուղղեց Ազգ. Վարչութեան շրջանաւարտ անդամներուն, շնորհաւորեց նորընտիր կազմերը եւ համոզում յայտնեց, որ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ աշխատանքները պիտի շարունակուին մէկ կամքով, սերտ գործակցութեամբ ու միեւնոյն նպատակով՝ մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին ծառայելու նախանձախնդրութեամբ: Վերջապէս, ան շնորհակալութեան խօսք ուղղեց ժողովս հիւրընկալող հոգաբարձութեան:

Ազգ. Երեսփոխանական ժողովի յաջորդ տարուան նստաշրջանը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանին մէջ, հիւրընկալութեամբ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հովիւնին եւ հոգաբարձութեան:

Ժողովը փակուեցաւ ժամը 3-ին, Առաջնորդ Սրբազանին Պահպանիչով ու Կիլիկիա երգին խմբային կատարումով:

36TH PRELACY REPRESENTATIVES ASSEMBLY

PRELATE H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN RE-ELECTED FOR A FOURTH TERM

- NEW RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS ELECTED

On Friday, May 9th, the 36th Prelacy Representatives Assembly convened at the “Armenag Der Bedrossian” Hall of St. Mary’s Church in Glendale. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the assembly which concluded on the afternoon of Saturday, May 10th.

During the two day assembly, the endeavors of the Prelate and the Religious and Executive Councils were evaluated and activities for the

forthcoming year were proposed and drafted. The election of the Prelate and Councils also took place.

The assembly commenced with prayer on Friday afternoon with a majority of the delegates present, as well as Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council members, Boards of Trustees chairmen, Board of Regents members, principals, and directors.

The Prelate welcomed the delegates and invited Very Rev. Fr. Muron Aznikian to read the Pontifical message of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia. The provisional divan was elected with Mr. Haigaz Terterian as Chairman and Mr. Hrair Tufenkjian as Secretary.

Welcoming remarks were made by Mr. Dikijian, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Chairman of the host church Board of Trustees Mr. Zareh Markarian.

The Prelate began his remarks by first and foremost giving thanks to God for granting the opportunity to serve our church and our people in the previous year and for His guidance, then thanked our Pontiff H.H. Catholicos Aram I for his constant care and attention, noting that His Holiness has declared 2008 to be the Year of Christian Education and that just as in previous years, we will once again heed the call of His Holiness and commemorate with special celebrations. The Prelate also noted that this is a historic year, for we will be celebrating the 50th anniversary of the establishment of a Prelacy in North America, and the 35th anniversary of our Prelacy. He pointed out that the work of the Prelacy is carried out "with the people and for the people", stressing that all of us must keep this principle in mind as we work together to advance our collective mission. The Prelate then gave a brief report on the previous year's activities.

The permanent divan was elected with Mr. Nazareth Sadorian and Mr. Haigaz Terterian as Chairmen, and Mr. Hamo Kasbarian and Archpriest Fr. Vicken Vassilian as Secretaries. The election of the Resolutions Committee and committee to oversee the elections took place, with Mr. Rouben Gourjian, Mr. Garo Eshgian, Mr. Marzbed Margossian, Mr. Hrair Tufenkjian, and Mr. Jora Manoucherian elected to the Resolutions Committee, and Mr. Dajad Yeretsian, Dr. Hagop Dikranian, and Mr. Krikor Piloian elected to the election committee. Brief reports on the activities of each parish by the chairmen of the Boards of Trustees followed.

Before moving on to the next items on the agenda, the Prelate announced that for the past few years it has become a tradition to honor a devoted servant of our Prelacy. This year, the Prelate and Executive Council found it appropriate to honor Building Committee member and faithful parishioner Mr. Hovsep Boyajian, who has continuously supported and encouraged the endeavors of the Prelacy and our parishes, specifically St. Sarkis Church in Pasadena and Holy Cross Cathedral in Montebello, both financially and morally. Mr. Boyajian thanked the Prelate and Council for the honor and for the opportunity to serve the Prelacy.

The assembly resumed its evaluation of the activities of the Prelate, the Religious and Executive Councils, and the Board of Regents, which the

Resolutions Committee found highly commendable. With regards to the plan of establishing a new high school in the Glendale area, the Prelate announced that London based benefactor Mr. Raffy Manoukian has committed \$6 million for this project. The Prelate also thanked Mr. Khajag Dikijian who has been following this project diligently.

The last item on the agenda of the first day's sessions was the election of the Prelate. The names of the candidates chosen by His Holiness were read, which were as follows: H.E. Archbishop Gomidas Ohanian, H.E. Archbishop Moushegh Mardirossian, and Very Rev. Fr. Paren Vartanian. Once all the votes were cast and counted, the election committee announced the re-election of Archbishop Moushegh Mardirossian for a fourth term with an absolute majority. The Prelate was led back into the hall in a procession by clergy members where the Chair of the divan congratulated him on his re-election. He thanked the assembly and invited the delegates for a prayer inside the church. After the prayer the Prelate gave his first address following his re-election in which he first thanked God and His Holiness Aram I. The Prelate then thanked the delegate once again for entrusting him with the responsibility of Prelate.

The assembly resumed on the morning of Saturday, May 10th. Among the items on the agenda were the presentation of the modified Prelacy and Schools' By-Laws, which the assembly ratified, and proposals regarding future activities.

The election of the Religious and Executive Councils also took place. The new Religious Council was elected as follows: Very Rev. Fr. Muron Aznikian, Very Rev. Fr. Barthev Gulumian, Archpriest Fr. Vicken Vassilian, Rev. Fr. Nareg Pehlivanian, Rev. Fr. Razmig Khatchadourian, Rev. Fr. Vazken Atmajian, and Rev. Fr. Vahan Gosdanian.

The new Executive Council was elected as follows: Dr. Garo Agopian, Mr. Garo Avakian, Mr. Nerses Melkonian, Mr. Varoujan Der Simonian, Mr. Mher Der Ohanessian, Dr. Navasart Kazazian, Mr. Vahe Havaguimian, Mr. Levon Kirakosian, Esq. Mr. Khatchig Yeretian, Mr. Vahrij Pilavjian, and Mr. Garo Eshgian.

At the close of the assembly Chairman Mr. Nazareth Sadorian thanked the delegates for their participation and input on behalf of the divan, and invited the Prelate to offer his closing remarks and benediction.

The Prelate commended and thanked the divan and delegates for their work over the past two days. He thanked His Holiness and once again thanked the assembly for the opportunity to serve as Prelate for four more years.

The Prelate also commended and thanked the outgoing members of the Executive Council and congratulated the new members. He concluded by thanking the Board of the Trustees of St. Mary's Church for hosting the assembly and announced that next year's assembly will take place at the Prelacy hosted by St. Gregory Church of San Francisco.

The assembly came to a close with the Prelate's benediction and the collective singing of "Giligia".

